**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

N 08/21/3894-2020

«24» 07 2020 թ.

**«ԲՈՒ ՎԻԺԸՆ ԹԵՔՆՈԼԸՋԻՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Հակոբյան**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Բու Վիժընն Թեքնոլըջիս» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 17-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-29» գնման պայմանագրի (այսուհետեսև՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «**Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական**» աշխատանքներ»՝ (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 Հավելվածով ներկայացված գնման ժամանակացույցին և N 2 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրին համապատասխան:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները պետք է կատարվեին 3 փուլով՝ 1-ին փուլ՝ մինչև 15.10.2020թ., 2-րդ փուլ՝ մինչև 20.12.2021թ., և 3-րդ փուլ՝ մինչև 27.06.2022թ.:

Նշենք նաև, որ «ԲՈՒ ՎԻԺԸՆ ԹԵՔՆՈԼԸՋԻՍ» ՍՊԸ-ն 04.06.2020թ. դիմել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեին՝ խնդրելով լուծել վերը նշված պայմանագիրը, նկատի ունենալով, որ ընկերությունը ի վիճակի չէ ամբողջությամբ կատարելու պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Համաձայն սույն պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման

պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով և սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը որոշեց, հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 17-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-29» գնման պայմանագրի 2.1.5 կետը, 2020 թվականի հուլիսի 24-ից միակողմանի ամբողջությամբ լուծել վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Բու Վիժըն Թեքնոլըջիս» ՍՊԸ -ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900011027837» հաշվեհամարին փոխանցել տրամադրված կանխավճարը՝ 120,000,000 (հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով, իսկ գանձման ենթակա գումարը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 1,475,000 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումարը նույն ժամկետներում փոխանցել «900005028106» հաշվեհամարին:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

Միաժամանակ հայտնում ենք, որ հնարավոր տույժերի, տուգանքների և պատճառված վնասների վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ**

**գլխավոր քարտուղարին փոխարինող՝** **Գ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

7/24/2020

X

ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Signed by: ALEKSANYAN GEVORG 2604770393

Գնումների բաժնի պետ՝ Ա. Բաղդասարյան
Հեռ. 010 59 00 47